է, եւ իր իտէալական ձեւի մէջ, տեւականութիւն:

Ի զուր չէ, որ եկեղեցիներին, այն վայրը, ուր մարդկութեան ողբերգութիւնն է տեղի ունենում, անուանում են նաւ:

Եկեղեցին եւ նաւը նոյնանման են, որովհետեւ ասուածային բնոյթն են բնորաշում:

Եգիպտական մշակոյթը Նեղոսի նաւարկումներից է առաջ գալիս: Եփրատը ամբողջ իր հոգեկան վերթումներով, իջնում, գլորւում է դէպի հարաւ: Կանգուն է միայն Հոմերոսը: Կայուն է կղզին, կայուն է նաւը, ու ծովը յաղթահարելուց յետոյ, Պղատոնը կարողանում է խօսել եւ Ֆիդիասը քանդակում է:

Ժայռոտ Բրիտանիայի ափերից մեկնող Տրիստանը տարօրինակ վիշապների է հանդիպում եւ, մի օր էլ, աւելի մօտ պառկած անյայտի եւ մահի ճիրանների մէջ, սպասում է նաւին, Իզոլդին, կեանքին:

* * *

Նաւը, նա՛ւը...

Լաւ գրուած պօէմա: Համաչափ իր բոլոր մասերում: Կշիռք: Իտէալ կազմակերպութիւն:

Վերեւի աշատարակում նաւավարի հայեացքը հանդստօրէն չափում է հորիզոնը, ալիքը, խորութիւնը, մակերեսը: Աստղերը եւ հոսանքները տրամաբանական մտքի ատաղձն են կազմում, քամիները դառնում են թուաբանական հաշիւ: Բնութիւնը եւ տարերային ուժերը մասնակցում են ռիթմական լինելութեան: Տիեզերքը ներկայ է:

Ամէն ինչ կարգաւորութիւն է եւ օրէնք:

Զանգակի ձայները արծաթէ դրամներ են նետում տարածութեան: Ամէն ինչ շարժւում է: Զուգընթաց ալիքների վրայ քայլող ոտքերով նաւաստիները քաշում են չուանները, բարձրանում կայմերի վրայ, շղթաները շարժման մէջ դնում, նաւակներ իջեցնում, շտապում, քրտնում:

Եւ ամէն ինչ կատարւում է անհրաժեշտօրէն, էական շարժումներով, օրգանապէս: Այստեղ մեքենան անանձնաւոր է եւ մաս: Նա իր դերը կատարում է ենթարկումի ճակատագրական հլութեամբ: Չի տեսնւում, չի տիրապետում, ինչպէս գործարանում: Փայլուն պողպատէ եւ պղնձէ ծառան է նա, հսկայ ծանրութիւն՝ թեթեւօրէն սլացող նաւի թեւերի վրայ նստած: Նաւը միտք է եւ թռիչք, շարժուն կենսունակութիւն, աստղերի խորհրդաւոր օրէնքներով ղեկաւորուած: Զգայուն, վերին աստիճանի՝ բանաստեղծի պէս:

* * *

Ծովի հետ ունեցած իր յարաբերութիւնից կարելի է բնորոշել մարդը:

Կարելի է բնորոշել ժողովրդները:

Մենք հայերս, կուլտուրապէս, ծովի եւ լեռան երկու հակադիր սկզբունքների պայքարով ենք ապրել:

Լեռնային մարդը անհորիզոն է եւ սահմանափակ: Լեռը ստրուկօրէն ներկան է, ինքնապաշտպանութիւն եւ սահման: Այստեղ երկինքը ամպ է, մշուշ եւ իր պայծառութիւնը ոչ մի բանի մէջ չի արտացոլւում: Լեռը ծանրութիւն է, բարձրացողի ծունկերի վրայ կախուած քար, ճնշում: Մռայլ է եւ գրեթէ անփոփոխ: Մենակութիւն է:

Եթէ լեռնային մարդը անասունների տրրտում ընկերակցութիւնը չունենայ՝ կը մեռնի:

Ծովը լայն երգի մեղեդի է, հոսանք, թռիչք եւ ապագայ: Բաց ճանապարհ է եւ աղմկալից կենսունակութիւն: Ծովափերին օդը թրթռում է, արիւնի հոսանքը արագանում, մարմինը արթուն է, եւ կանայք սիրուել են ուզում:

Ծովը բոլոր կարելիութիւնների բանալին է եւ ցանկութիւնները վառող ջահակիրը:

Մեր նախնիքները ծովերը եղերող լեռների վրայ կանգ են առել, խրխնջող ձիերի վրայ բազմած:

Ու դրա մէջ է մեր ամբողջ դրաման:

* * *

Գիշերը ծով եւ նաւ խաղաղ են:

Լուսինը արծաթէ ոտքերով մեզ հետ քայլում է: Գալիս է հանդիստ, ցած ձայնով ոսկիների մէջ փայլփլող մի առասպել պատմելով: Պարզուկ են խօսքերը, միամիտ՝ լոյսի եւ ստուերի խաղը: Նսեմացած է գոյների հակադրութիւնը. սկիհի վրայ նետուած է շղարշը. երգեհոնի երկու խողովակներն են երգում. մէկը ցած, միւսը բարձր:

Նաւը թեթեւօրէն առաջանում է, քթիթը տնկած՝ ասպետի կուրծքի նման: Մերթ ընդ

Հայ մատենագրության թուանշանային գրադարան